Որտեղ փնտրել աշխատանք

Աշխատանք կարող է փնտրել ցանկացած անձ՝ անկախ իր կրթությունից, որակավորումից, զբաղվածությունից: Թվում է՝ հիմա մարդիկ ավելի շատ ունեն աշխատանքի կարիք, քան նախկինում: Միևնույն ժամանակ, գործատուներն ունեն և կունենան որակյալ աշխատուժի կարիք:

Աշխատանքի որոնումն ակտիվ գործընթաց է և սկսվում է նախապատրաստումից: Այն ենթադրում է նախ՝ թափուր աշխատատեղերի, համայնքում գործող կազմակերպությունների և ձեռնարկությունների, քո կարողությունների և նախասիրությունների մասին տեղեկատվության հավաքագրում, աշխատանքային կենսագրականի կազմում, հետո միայն համապատասխան թափուր աշխատատեղի համար քո թեկնածության ներկայացում:

Այս գործընթացում հաջողություն ունենալու համար կարևոր է, թե որտեղ ես փնտրում քո ապագա աշխատանքը: Քեզ օգնելու համար ստորև առաջարկում ենք թափուր աշխատատեղերի մասին հավաստի հայտարարություններ հրապարակող հիմնական կայքերի հղումներ.

https://staff.am/am/
https://jobfinder.am/
https://job.am/
https://careercenter.am/hy
https://www.worknet.am/hy/
https://jobspider.am/
http://hr.am/
https://ijob.am/
https://www.myjob.am/
https://ashxatanqner.am/
https://job.banks.am/am
https://www.workforall.am/

Սոցիալական ցանցերում կարող ես փնտրել նաև թափուր աշխատատեղի մասին հայտարարությունները **#գործկա** հեշթեգով: Միայն հիշիր, պետք է անպայման ստուգել հայտարարության աղբյուրը՝ համոզվելու, որ այն հավաստի է:



Աշխատանք փնտրելու հարցում քեզ կարող են օգնել նաև ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Միասնական սոցիալական ծառայության տարածքային կենտրոնում (նախկին՝ Զբաղվածության տարածքային կենտրոն)**.** Կենտրոնները գործում են հանրապետության 49 համայնքներում: Քո բնակության վայրի տարածքային կենտրոնի մասին տեղեկանալու համար կարող ես այցելել պաշտոնական կայքէջ՝ հետևյալ հղումով՝ **https://socservice.am/**

Եթե ուսանող ես, ապա քեզ կարող են աջակցել նաև քոլեջի, ուսումնարանի և համալսարանի կարիերայի կենտրոնի մասնագետները: Դիմիր խորհրդատվության համար:
Եթե որոշել ես քո նախընտրած կազմակերպությունում կամ ձեռնարկությունում աշխատել, ուրեմն հետևիր դրանց պաշտոնական էջերի նորություններին, սոցիալական հարթակներում հրապարակվող հայտարարություններին:

Իսկ որ ամենակարևորն է, աշխատանք փնտրելու քո պլանների մասին անպայման տեղեկացրու ընկերներիդ, ծանոթներիդ, մտերիմ մարդկանց: Իրականում նրանք ամենակարևոր ռեսուրսն են, ովքեր կարող են տեղյակ լինել առկա թափուր աշխատատեղերի, իրենց աշխատավայրում հնարավոր համալրման մասին և առաջարկեն քեզ դիմել:
Հավատա՛, փնտրողը հաստատ գտնում է: